Երկու հանդիպում՝ հուզական նոտայով

Անուշ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Հայկական բարեգործական ընդհանուր միության նորընտիր նախագահ **Պերճ Սեդրակյանը** Հայաստանում իր աշխատանքային այցի հերթական օրը՝ ապրիլի 8-ին, երկու հանդիպում էր նախատեսել՝ Հայաստանի գրողների միության անդամների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Գրողների հետ զրույցը, բնականաբար, պետք է վերաբերեր հայ գրին ու գրականությանը՝ որպես ազգապահպանության կարեւոր գործոնի: *«Գրողների միությունը կմնա մեր ազգային առաքելության ծրագրերում ամենակարեւորներից մեկը»*,-խոսացավ ՀԲԸՄ նախագահը եւ կանգ առավ մեկ այլ կարեւոր հանգամանքի՝ սփյուռքում հայեցի դաստիարակության խնդրի վրա, մանավանդ որ, ըստ ՀԲԸՄ դիտարկումների, սփյուռքահայերի միայն 10 տոկոսն է հայկական կրթություն ստանում: *«Եթե լեզուն չենք կարող պահել, գոնե հայ մշակույթը եւ հայ լինելու հպարտությունը պահպանենք»*,-ասաց Պ. Սեդրակյանը:

Թերեւս տարօրինակ կլիներ, եթե այդ երկու հանդիպումներում առանցքային չլիներ Կիպրոսի Մելքոնյան վարժարանի խնդիրը, որի փակման որոշումը կայացվել է մարտի 18-ին ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովի կողմից: Ըստ այդ որոշման՝ վարժարանը փակվելու է 2005 թ. հունիսին:

Գրողների միությունում «մեղրի մեջ մի գդալ կուպր խառնեց» Արմեն Հովհաննիսյանը: Նրան արձագանքեցին Մելքոնյան վարժարանի սան Կարպիս Սուրենյանցը եւ մելքոնյանցու զավակ Վահրամ Թաթիկյանը: Կ. Սուրենյանցը հիշեց պատերազմի դժնդակ տարիները, երբ վարժարանի տնօրինությունը ամեն զոհողության գնաց, որ պահպանվի կրթօջախը: *«Արդյո՞ք հիմա ավելի ծանր են պայմանները, քան պատերազմի ժամանակ»*,-հարցրեց նա:-*Մելքոնյան վարժարանը Մերձավոր Արեւելքում միակ կրթօջախն է, որ մինչեւ այսօր էլ պահպանում է իր դեմքը, պատիվը, ինչպես եւ քաղաքական նշանակությունը»*:

Վ. Թաթիկյանն էլ վարժարանի փակման որոշումը համարեց «հարկադրված քայլ, հուսահատության ճիչ», եւ պատճառը տեսավ այն բանում, որ «չափից ավելի կենտրոնացած առնչին հոգսերի մեջ՝ մենակ թողեցիք սփյուռքին»: Նա հավատացրեց, որ Հայաստանի գրողները պատրաստ են լինել միության կողքին եւ աջակցել ցանկացած հարցում:

Աննախանձելի կարելի էր համարել ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանի վիճակը, որը նախ գրողներին, ապա նաեւ լրագրողներին փորձեց նկարագրել այն դժվարին կացությունը, այն տառապանքները, որոնք ուղեկցել են կենտրոնական վարչության անդամներին՝ այս որոշումը կայացնելիս: Մելքոնյան վարժարանը, որի ազգապահպան դերն անուրանալի է, այսօր այդ դերը չի կատարում: Այսօր քչերն են իրենց զավակներին կրթության ուղարկում այնտեղ, անգամ նախկին մելքոնյանցիները նման նախաձեռնությամբ հանդես չեն գալիս: Այժմ վարժարանում ուսանող 206 աշակերտներից միայն 18%-ն է ամբողջությամբ վճարել ուսման վարձը, 40%-ը վճարել է մասնակի, մյուս 40%-ը՝ ընդհանրապես չի վճարել:

Խիստ կարեւորելով Մելքոնյան եղբայրների ժառանգությունը՝ ՀԲԸՄ-ն այն փակելու դժվարին որոշում է կայացրել: Փոխարենը մտադիր է Մելքոնյան կրթական կենտրոն հիմնել հայրենիքում, որն այլեւս ազատ է ու անկախ: Վկայակոչելով այն փաստը, որ սփյուռքի արդեն 5-րդ սերունդը կորցրել է հայրենիքի հետ ֆիզիկական կապը, Պ. Սեդրակյանը հույս ունի, որ Հայաստանում ստեղծվելիք կրթօջախը «նրանց միացնելու, հայրենիքի միջոցով իրար-հանի բերելու» հնարավորություն կընձեռի:

Սփյուռքի իր բոլոր վարժարաններում 5500 աշակերտ ունեցող Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահը կարծում է, որ «պատմությունը այս որոշումը սխալ չի գտնի»: Իսկ Մելքոնյան վարժարանը 80 մլն դոլարով վաճառելու մասին աբխարհի Մելքոնյան շրջանավարտների միությունների կոնֆեդերացիայի՝ Մելքոնյանցի ինտերնացիոնալի (ՄԻ) տարածած հայտարարությունը Պ. Սեդրակյանը համարեց հերյուրանք եւ խոստովանեց, որ իրենք «ուրախ պիտի լինեին» այդ պարագայում:

Թեեւ երեկ տեղի ունեցած երկու հանդիպումներն էլ առավելապես հուզական նոտայի վրա ընթացան, եւ կարծես թե՝ մի կողմ մղվեցին Հայկական բարեգործական ընդհանուր միության ծրագրերը հայրենիքում եւ սփյուռքում, այսուհանդերձ, դրանք կան եւ բազմազան են: Սփյուռքում դրանք առաջին հերթին առնչվում են կրթությանն ու երիտասարդությանը: Դրանք տարրական եւ միջնակարգ դպրոցներն են, բարձրագույն կրթության համար տրված կրթաթոշակները, երիտասարդության ամառային հանգստի ճամբարները եւ այլն: Շատ կարեւոր է հրատարակչական գործունեությունը, որի նպատակը հայ հեղինակներին եւ հայկական ժառանգությունը գովազդելն է:

Հայաստանում ՀԲԸՄ բարեգործական ծրագրերը վերաբերում են Հայաստանի ամերիկյան համալսարանին, Երեւանում բացված 3 հայորդաց տներին, Սուրբ Ներսես Մեծ հիվանդանոցին: ՀԲԸՄ-ն մարդասիրական օգնություն է ցուցաբերում 1200 թոշակառուների ու ծնողազուրկ երեխաների՝ բարեգործական ճաշարանների միջոցով, ֆինանսավորում է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը, դրամաշնորհ է հատկացրել Սեւանի հոգեւոր դպրանոցին եւ այլն: Ծրագրեր են իրականացվում նաեւ Արցախում: ՀԲԸՄ նախագահը հավաստիացրեց, որ միությունը միայն մեկ շահ ունի՝ ազգի շահը: